

Շահխաթունեանցի ստորագրութիւնը (բ. Հատոր), 3) Սարգիս Արքեպիսկոպոս Զալաբեանցի ճանապարհորդութիւնը (բ. հատոր), 4) Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութիւնը, 5) Կիրակոս Գանձակեցոյ պատմութիւնը, 6) Յովհաննէս Զ. Կաթողիկոսի պատմութիւնը, 7) Ստեփաննոս Եպիսկոպոս Օրբէլեանի պատմութիւնն, 8) Ղևոնդ վարդապետի պատմութիւնը (Արշաւանք Արարացոց), 9) Թօմայ վարդապետ Արծրունոյ պատմութիւնը, 10) Աբրահամ Կաթողիկոսի Կրետացոյ՝ պատմութիւն Նազիր շահի, 11) Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի՝ «Սիսական Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», 12) Դպրոցական Տեսուչ Պ. Հայրապետ Ղուկասեանցի՝ ձեռագիր ժը. դարու պատմութիւն Բագուայ, 13) Բէրէզինայի ճանապարհորդութիւն ՚ի Կովկաս, 14) Վիճակագրական տեղեկութիւն նահանգին Բագուայ կաղմնալ հրամանաւ Նահանգապետին և 15) Վերջին տարիներումս բարձր. Մակար Ծ. վարդապետ Բարխուդարեանցի գրած «Աղուանից երկիր և դրացիք» անուանեալ գիրքը, 16) Եւս և «Գարբանդ նամայ» անուանեալ ձեռագիր պատմութիւն Գարբանդ քաղաքի:

Ինչպէս վերեր գրեցեմ՝ շատ մանրամասնութեանց մէջ չեմ մտել, ըստ որում նախ՝ որ արդէն ուրիշները գրել են, և երկրորդ որ՝ Առաջնորդական ծանր պաշտօնով զբաղուած լինելով՝ հազիւ այսքանը գրելու ժամանակ գտի և գրեցի, որքան կարացի:

Աղուանից ազգի ծագման և ծաւալման, աճման և նուազման մասին, նոյնպէս և կենաց ու կառավարութեան մասին, ևս և քաղաքական և կրօնական կառավարութեանց տեղագրական դրութեան մասին հարկ չհամարեցի մանրամասն նկարագրել. վասն զի Աղուանից աշխարհը Հայոց թագաւորութեան վերջանալուց յետոյ (1375.) ընկնելով Պարսից, Օսմանցոց և Լեզկեաց պետութեանց կառավարութեան ներքոյ, ոչ մի ազգային յիշատակարան չէ կարողացել պաշտպանել, որ Աղուանից անունով յիշուի, այլ բոլորը անունով և ձեով Պարսկացած կամ թուրքացած լինելով՝ կորցրել են Աղուանական անունը և ձեւը, ուստի և արժանի չեն համարվում նկարագրութեան. Բարձրապատիւ Մակար Ծ. վարդապետը (այսպէս Եպիսկոպոս) ճգնելէ որքան կարելի է մանրամասն նկարագրել Աղուանից աշխարհը, բայց դարձեալ գիտութեամբ և անգիտութեամբ սխալներ չատէ արել,